

և այնչափ է աս բանիս ստուգութիւնը՝ որ եթէ երկու եղբարք՝ որոնց ծնողը թոքացաւ ունենան, ծնանելնուն պէս մէկմէկէ բաժնուելու ալ ըլլան երկուքն ալ դարձեալ նոյն ախտին տէր կ'ըլլան, թէ որ մասնաւոր կերպով մը նոյն ախտէն ազատելու համար ինչ զգուշութիւններ որ կը պահանջուի ըլլայ անոնց վրայ : — Դարձեալ ծուռ կարծիք է, հաւտալը թէ Միլիարդ կամ Լարմիացաւ ըսուած հիւանդութիւնը և ուրիշ ամէն տեսակ մորթային ախտերը տարափոխիկ են . վասն զի Աստուծոյ մասնաւոր նախախնամութեամբը՝ տարափոխիկ ախտերը որչափ որ ռամիկը կը կարծէ, անկէց հարիւր անգամ աւելի քիչ են . և այսպիսի սուտ կարծիքներէ ու վախերէ կը պատահի շատ անգամ՝ որ կը զգուշանայ մարդ ձեւքէն եկած օգնութիւնը ընելու այնպիսի խեղչերու, որ աս տեսակ փոխազրական կարծուած հիւանդութեամբ կը մնան երեսի վրայ :

Դաջին տեսակը ընդհանրապէս աւելի ուժով և կորովի մարդկանց կը վնասէ, իսկ ապականակիր կամ ապականարար տեսակէն վնասուողները աւելի տկար, ազքատ և նորաբոյժ հիւանդները կ'ըլլան . իսկ զինեմոնները, շատակերները, աղտոտ մարդիկները, վախկոտները, նախանձուները ամէն տեսակ հիւանդութենէ աւելի՝ աս երկու տեսակ հիւանդութեանց ենթակայ կը սեպուին :

Հանրակիր ախտերուն դէմտէրութիւնք շատ աղէկ օրէնքներ հաստատած են, մասնաւոր պահապաններ գնելով, արգելանոյններ ու մնաքրարաններ շինելով. ապականարարներուն դէմալ հօտած ջրերը ու ձահիձները ցամքեցնել տալով որ օղը չապականնեն . բրինձ մակելու տեղերուն կարգ գնելով, կերակրեղինաց զինը որոշելով, և այն և այն :

Ակայն ինչ և իցէ ատեն և ուր որ ըլլայ՝ աս անտանելի հանրակիր ըսուած

ախտերուն մէկ պզտի նշանն ալ թէ որ սկսի երևնալ, շատ օգտակար է որ ամէն մարդ ալ լաւ գիտնայ աս ետևի զրած զգուշութիւնները,

Ա. Բատ կարի փախչիլ և զգուշանալ աղտոտ մնարդկանցմէ ու տեղերէ :

Բ. Տէրութեան հրամայած ամէն նախահոգ զգուշութիւնները ընել :

Գ. Կրաքանչիւր մարդ ըստ կարի թէ ինքզինքը և թէ իր տունը մաքուր պահէ :

Դ. Ռժիկներուն տուած խորհուրդներուն ուշադիր ըլլալով պահէլ :

Ե. Վմենելին պէտք չէ շատ վախնալ և ոչ ալ սաստիկ յանդուգն ըլլալ, և այնպէս բռնէ մարդ ինքզինքը որ ոչ մարսողութեան և ոչ ալ ուրիշ կենդանական գործարանաց մէկուն պզտի այլայլութիւն մը բերէ :


Զ. Խակ անոնք որ կամ 'ի պաշտօնէ և կամ 'ի մարդափոխութենէ այսպիսի հիւանդաց օգնութեան կ'երթան ու անոնց մէջ կը մտնեն, անկէ վերջը պէտք է մասնաւոր կերպով զգուշանան առողջներուն հետ ընտանութիւն ընելին, որպէս զի ըլլայ թէ անոնց ալ նոյն հիւանդութիւնը պլըշարկեն, շատ անգամ մաքուր օղի մէջ պտըտին, բերաննին ժողվուած լորձունքը թքնեն և այն :

## Բ' ԱԿԱՆ Գ. ՏՏՈՒԹԻՒՆ

ԲԱՍԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Բառ :

Բ' ԱԿԱՆ Կամ թէ ըսենք սնական կենդանիներու մէջ ամենէն վայրենին բաղն է, թէպէտ և աշխարհիս ամէն կողմերն ալ կը գտնուի : Լրկայն ձամբայ կ'ընէ քալելով. լնդարձակ ծովեր կ'անցնի, ամէն կիմմայի կը զիմմանայ ու որ և իցէ բան կ'ուտէ : Բաղը զարմանալի յատկութիւնը մը ունի որ գիւրաւ վայրենութիւնը կը կորսընցնէ ու կ'ընտանենայ, բայց աւելի դիւրութեամբ



## Բար :

ունեցած ընտանութիւնը մասնալով դարձեալ վայրենի կը դառնայ : Ի ագերը երկու ցեղ կը բաժնուին , իրարուներհակ բնութիւն ունենախուն համար . մէյմը տնական բադ , մէյմին ալ վայրի բադ : Ո՞ենք հոս ընտանի բազին վրայ խօսինք , որ առանին անտեսութեն մէջ ալ շատ բանի օգտակար է :

Ի սդհանրապէս երկու տեսակ տնական՝ բադ կայ , որոնք իրենց մեծութեամբն ու փետուրներուն փայլունութեամբը միայն իրարմէ կը տարբերին : Պլատի տեսակը հասարակ է բադ կը մեծ տեսակը՝ Պլետիստիստանի բադ : Ի սննցմէ առջինը աւելի օգտակար է , և պահելու համար ալ շատ աշխատութիւն չուզեր . բաւական է որ գետի կամը մը քով ըլլայ որուն մէջ իր ուտելիքը գտնէ , թէ և իրեն ուտելու ուրիշ բան չորուի : Վիշ անգամ ջրէն դուրս կ'ելլէ , ու թէ որ ելլէ հեռանայ՝ նապաստակն ու կուզ՝ ըստած կենդանին վրան կը յարձըկին :

Երկրորդ տեսակ բադին տեսքը աւելի աղուոր է , բայց որովհետև օգտարքիչ է , անոր համար ցեղ տեղուանք կը ջանան որ առջի տեսակը բազմացը նեն :

Ի ագերը մարտին առջի օրերէն ինչուան մայիս ամսուն վերջերը հաւկիթ կ'ածէն , և շատերը ամէն օր : Ի՞ս հաւկիթները հաւու հաւկիթներէն քիչ մը մեծ են . կեղեր ամենաողորկ ու գոյնը կապտագոյն ձերմակ . համը հասարակ հաւու հաւկիթին նման , միայն ձերմը կաւցը քիչ մը անախորժ համունի :

182. Սահման :

Ի ստանի բադը որչափ որ առաս ու դիւրաւ հաւկիթ կ'ածէ , անոր ներհակ նոյնչափ ալ դժուար թխսի կը նստի . և նստելին ետքն ալ մեծ արթնութիւն ընելու է որ ըլլայ թէ հաւկիթները տանի ուզած տեղը դնէ . վասն զի երբեմն հաւկիթները ծածուկ տեղ մը դնելին ետքը՝ ինքն ալ յանկարծ կը կորսուի , ու հազիւ թէ վեց շաբաթէն ետքը ձագերովը դուրս կ'ելլէ :

Ի՞ս բանս թէպէտ և շատ չպատահիր , բայց աղէկ է որ յայտնի տեղ մը թըխսի նստի , քան թէ առանձին բցնի մը մէջ այնչափ հաւկիթներու վրայ : Ո՞ինչ չետասուերկու հաւկիթ թխսի կը ընաս դնել . բայց թէ որ պատիկ բադ է ութէն աւելի պէտք չէ դնել : Փորձեր տեսեր են որ բադ մը ուրիշ բադի հաւկիթներուն վրայ թխսի չուզեր նըստիլ և օտարի հաւկիթ ըլլալը մէկէն կը ձանչնայ , որ կարգէ դուրս բան է :

Ի ագի ձագերը երեսունումէկ օրուան մէջ հաւկը թէն կ'ելլէն , ու ասդիս անդին քալել կը սկսին կերակուր փնտուելու համար : Ո՞ւզի օրերը կերակը համար հացի մանրուք պէտք է տալ կաթի կամ ջրի մէջ թաթխած , քանի մը օրէն ետքը ցորենի կամ մնրացորենի ալիւր ու եղինձի՝ մատզաշ տերեները խաշել ու բազերուն տալու է : Երբորքիչ մը կ'ուժովնան՝ կրնաս այլ և այլ ընդեղէններ ալ տալ . միայն թէ պէտք է մանրել ու ցորենի թեփով ու ջրով խառնել : Տասը կամ տասուերկու օրէն ետքը կրնայ թողուիլ որ երթան իրենք իրենցմէ կերակուրնին ձարեն . ան ատեն բադին մանր ու տկար ձագերը որ հազիւ թէ կանաչագոյն փետուրով մը ծածկած կ'ըլլան , կը սկսին ասդիս անդին իյնալ՝ որ ըշացեալ ջուր մը գտնեն մէջը մտնելու համար : Երբոր կը գտնեն՝ մէկէն մէջը կ'ինչնան ու կը սկսին տապըլը կիլ և ուրախանալ . բայց թէ որ իրենց թըխսմայը հաւ մը ըլլայ , խեղճը լժին եղերը տագնապած կը սկսի ձուալ ու ձագերը կանչել :

Երբոր բադերը աղէկ մը կ'ուժով 182. Բարձուն :

նան ու կը մեծնան , անկէ ետքը վրա-  
նին հոգ պէտք չէ ընել : Ի՞նիստիլ ամէն  
բան կ'ուտեն , աղտոտ ձձիներ , ձկներ ,  
պտուղ , ընդեղէն , արմտիք ու ինչ և իցէ  
ուրիշ բան , միայն թէ քիչ մը խոնաւ  
ըլլայ . և թէ որ ուտելու չոր բան մը  
գտնեն՝ ջրի մէջ կը նետեն , կ'ըսեն , որ-  
պէս զի կակըդնայ : Ը ատակեր ալ էն ,  
և թէ որ զիրենք գետակի մը մէջ թո-  
ղուս՝ ուր որ շատ ձկներ գտնուին , քիչ  
ատենուան մէջ բոլոր մանր ձկները  
կ'ուտեն :

Ի՞ազը որովհետեւ ասդիէն անդիէն  
փետուրներ կը ժողվէ , ու շատ անգամ  
ալ նաև իրեն վրայի փետուրները կը  
փետտէ , ումանք կարծեր են թէ բազը  
փետուր ալ կ'ուտէ . որ բոլորովին սխալ  
է . իսկ փետուր ժողվելուն հաւանա-  
կան պատճառը աս է որ էգ բաղը եր-  
բոր թիսի կը նատի , արուն իրեն կե-  
րակուր չբերէր , ուստի կը հարկադրի  
որ օրը գէթ անգամ մը որսի երթայ .  
նոյն միջոցին որպէս զի հաւկիթները  
չպաղին՝ զանոնք փետուրներով կը գո-  
ցէ , ու թէ որ բաւական փետուր ժող-  
ված չըլլայ՝ իրեն կուրծքիններն ալ  
կը փետտէ : Ի՞ս բանիս համար ալ է որ  
երբոր հաւկիթ ածելու ժամանակը կը  
համար , բաղերը փետուր ժողվելու հա-  
մար հաւերուն վրայ կ'իյնան ու անոնց  
փետուրները փետելու կը ջանան :

Ի՞ադին միսը ախորժահամ ու մնջն-  
դարար ալ է : Ի՞զը մութ կարմիր է ու  
վրան սև բծեր ունի : Ը ատ անգամ  
մէկ բունին մէջ երկու էգ թիսի կը նրա-  
տին ու իրարու հետ սիրով կը կենան :

### ԱՍՏԵՂԱԲԱԾԽՈՒԹԻՒՆ

ԼՐԿԱԿԻՆ ՎՐԱՅ ԿՈՐ ԱՐՔԱՆԵաիէ Մը ԳՓԽՈՒՒլ:

ԽՇՉՈՒԱՆ աս օրերս ԼՐԿԱԿ ըսուած  
մոլորակին վրայ բաց ՚ի իրեն հրաշալի  
մանեակէն , եօթը հատ ալ արբանեակ

կամլուսին գիտէինք : Ասոնցմէ առջինը  
գտաւ Հիւյկէնս 1655ին . բայց կար-  
ծելով թէ առաջին կարգի մոլորակնե-  
րը մէկէն աւելի արբանեակ չեն ունե-  
նար՝ ետևէ չեղաւ ուրիշ ալ գտնելու .  
բայց ետքէն 1671ին , 1672ին և 1674ին  
ուրիշ չորս հատ ալ երևելին Դամինի-  
կոս Քասսինի աստեղաբաշխը գտաւ :  
Ի՞նկէց հարիւր տարիի չափ միջոց՝ քանի  
որ Հերշէլիր հսկայաձե 39 ոտնաշափ  
գիտակը դեռ երկինք չէր ուղղած , կը  
կարծուէր թէ Լրկակը ուրիշ արբա-  
նեակ չունի . բայց ինքը 1789ին ուրիշ  
մէկ վեցերորդ մըն ալ տեսաւ , մէկ երկու  
շաբաթ վերջը , սեպտեմբերի 17ին ու-  
րիշ եօթներորդ մըն ալ : Ի՞ն ատենէն ին  
չուան հիմայ , որ գրեթէ յիսունուինը՝  
վաթսուն տարի է , աս մոլորակիս բաց  
՚ի իրեն մանեակին վրայ եղած նոր դի-  
տողութիւններէն ուրիշ երևելի տեղե-  
կութիւն մը չունէինք . բայց մօտերս  
Լիվրիուլի էսէլ աստեղաբաշխը՝ գալ  
զիացի | ըվեռիէ աստեղաբաշխին կը  
ծանուցանէ թէ աս սեպտեմբերի 18ին  
գիշերը Լրկակին վրայ ուրիշ մէկ ու-  
թերորդ արբանեակ մըն ալ տեսեր է :

Ո՞ենք հոս աս ալ աւելցընենք , որով  
աս երևելի աստեղաբաշխին արդիւնքը  
կերպով մըն ալ կ'աւելնայ , թէ ինքը իր  
ձեռքովը ոչ միայն իր գիտակին ոսպնա-  
ձեւերը շիներ է , հապա նաև դիտակին  
յենսարանը , որուն վրայ որ հանգչած է ,  
և բովանդակ մէկալ կազմուածքը իւր  
սարօքը , որուն վրայ որ կը շարժի գի-  
տակը :

—————

### ՀԱՆԵԼՈՒԿԱ

ԵՐԿԱԿԻ հանգոյն յար ընթանամ  
երկրի նըման ես անշարժ կամ 1 .  
Ի համբուրից մերձ որոտամ  
Անձրէ հեղում մաննանիըման :

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ հանելուկան եր ԱՐԵՒ-

1 Բատ կարծեաց հնոց :